ՄԱՆՈՒՉԱՐ ՋԱՎԱԴԻ ԱՊՐԵՍՅԱՆ
(1964-1992թթ.)

Մանուչար Ջավադի Ապրեսյանը ծնվել է 1964թ. Կրասնոսելսկի շրջանի (ք. Ճամբարակ) Օրջոնիկիձե (Վահան) գյուղում: Ավարտել է գյուղի միջնակարգ դպրոցը, ապա Երեւանի կոոպերատիվ տեխնիկումը: Այնուհետեւ ծառայել է խորհրդային բանակում՝ որպես տանկի հրամանատար: Ամուսնացած է, ունի մեկ որդի:

Երբ սկսվեց արցախյան ազատամարտը ու թեժ մարտերը ծավալվեցին Հայաստանի սահմանամերձ շրջաններով, Մանուչարը՝ Մանչոն, իր ընկերներ Հարություն Թորոսյանի, Գուրգեն Դանիելյանի եւ ուսուցիչ Գարուշ Բրուտյանի հետ անվարան գնաց պաշտպանելու հայրենի գյուղի դիրքերը: «Երրորդ պոստը ամենավտանգավոր ու դժվարիններից մեկն էր, սակայն անձնուրաց տղաները որդեգրել էին «Մահ կամ ազատություն կարգախոսը ու մինչեւ վերջ էլ պայքարեցին՝ անառիկ պահելով գյուղը հսկող բարձունքը: Մանուչարը վեցամսյա որդուն՝ Մանուկին, թողեց բարուրում եւ այդ օրհասական ժամին միացավ տղաներին, որ թշնամին չխաթարի իր մանկան անդորրը: Իր Մանուկ որդին իր համար մանուկ էլ մնաց, որովհետեւ անողոք ճակատագիրը հորը թույլ չտվեց գոնե տեսնել որդու առաջին քայլերը ու լսել թոթովը, իսկ որդու շուրթերից իսպառ խլեց հայրիկ բառը:

Օգոստոսի 29-ի լույս 30-ի լուսաբացին Մանչոն իր ընկերների հետ սուրբ նահատակ դարձավ ու կյանքը նվիրաբերեց հայրենիքին: Գիշերվա խավարում, արկերի ու ականների պայթյունների ներքո նրանց աճյուններն ամփոփեցին խրոխտ ու երկնառաք լեռների մեջ ծվարած գողտրիկ Վահանի պանթեոնում, որտեղից նրանք հավերժ հսկում են գյուղի սահմանը՝ եւս մեկ անգամ ոսոխին ապացուցելով, որ հայ ազգը պայքարել, պայքարում ու դեռ կպայքարի հանուն հայրենի երկրի ազատության ու անկախության: